

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
YEREVAN STATE UNIVERSITY  
MATENADARAN AFTER MESROP MASHTOTS  
INTERNATIONAL CONFERENCE

AT THE DAWN OF ARMENIAN CHRISTIANITY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
МАТЕНАДАРАН ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА  
МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ  
НА ЗАРЕ АРМЯНСКОГО ХРИСТИАНСТВА

THE ABSTRACTS OF REPORTS / ТЕЗИСЫ ДОКЛАДОВ

PUBLISHING HOUSE "GITUTYUN" NAS RA  
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА  
YEREVAN  
ЕРЕВАН  
2016

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՐՇԱԼՈՒՅՍ  
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2016

<b>ԳՈՒՆԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ</b>	
ԹԱԴԵՎՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼԵԳԵՆԴԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ ...	47
<b>ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ</b>	
ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՆ	
ԱՅԴ ՄԱՍԻՆ .....	50
<b>ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ</b>	
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ .....	52
<b>ՏԵՐ ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ</b>	
ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ Ա-Գ ԴԴ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ .....	55
<b>ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</b>	
ԹԱԴԵՆՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆՇԱՆԱԿՈՐՈՂ «ՕԹՅԱՅ ԽԱՁ» ՍՐԲԱՎԱՅՐԸ .....	57
<b>ԱՇՈՑ ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ</b>	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՂԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ .....	59
<b>ԴՕԱՐ ԿԱՐԱԴԵՅՅԱ</b>	
МУЧЕНИКИ ГОРЫ АРАПАТ (ПО ИНОСТРАННЫМ ИСТОЧНИКАМ) .....	62
<b>ՀԱԿՈՐ ՄԻՄՈՆՅԱՆ</b>	
ԴԱՐՁ: ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ...	68
<b>ՈԱՅԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ</b>	
«ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԵՐՅՈՒԱԾՈՑ»-Ը .....	73
<b>ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ</b>	
ՀԱՅՈՑ ԵՒ ԱՂՈՒԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅԱՆԿԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒԽԱՒՈՐՉԻՑ ԱՌԱՋ .....	76

<b>ԱԶՍ ԲՈՉՈՅԱՆ</b>	
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՀԵՏՔԵՐ ԳՐԻԳՈՐ ԼՈՒԽԱՎՈՐՉԻՑ ԱՌԱՋ ...	80
<b>ԳՈՒՆԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ</b>	
ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅՈՒՆ, ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ .....	82
<b>ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ</b>	
ՀԱՅՈՑ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԻ ԲՆՈՐՈՇ ԿԵՐՊԱՐԸ .....	89
<b>ՄԻՄՈՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ</b>	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔԸ .....	92
<b>ԱՇՈՑ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ</b>	
ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԻՆ ԾԵՍԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ .....	95
<b>ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ</b>	
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ .....	99
<b>ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ</b>	
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ .....	101
<b>ԿՅԱՏԿԻԵՎԻՉ ՍԵՏՐ</b>	
ТОРГОВЫЕ ПУТИ В МАЛОЙ АЗИИ: ИСТОРИЧЕСКИЙ И СОВРЕМЕННЫЙ АСПЕКТ .....	105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՆԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ  
ԸՆՏԱՆԻՔԸ

Արքայական իշխանության դյուցատուր լինելու մասին համոզմունքը գալիս է, առնվազն, մ.թ.ա. 3-րդ հազարամյակից, Եգիպտոսից: Միջագետքում Նարամ-Սուլենն էր, որ նույն հազարամյակում անհեթեթության հասցրեց իր աստվածային էություն ունենալու մասին պատկերացումները, և որի դեմ ընդվզեցին Շումերական քաղաք-պետությունները: Բասիլանները և հերոսները որպես գերբնական էակներ էին ընկալվում Հոմերոսյան դարաշրջանի առասպելաբանաստեղծական բնույթի ստեղծագործություններում: Ուշ դասական Հունաստանում, սակայն, հույն մտածողների համար, նման մտքերը զավեշտալի էին, ինչպես՝ Ալեքսանդր Մակեդոնացուն Ամոնի որդու հետ համադրելու եգիպտական քրմերի կատարած փորձը: Ալեքսանդրի օրինակով, դյուցազնական ծագում ստացան նաև հելլենիստական տերությունների տիրակալները: Այս ավանդույթը կրկին անգամ անհեթեթության հասցրեցին Հռոմի կայսրերը: Հայաստանում այս պատկերացումն արթուն էր Վանի թագավորությունում, Երվանդունիների միջավայրում, Արտաշեսյանների և Արշակունիների օրոք:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, հին աստվածների պաշտամունքը վերացավ, սակայն հին պատկերացումները ցեղապետի ու տիրակալի դյուցազնական ծագման մասին, այնուամենայնիվ, մնացին: Եվ, ահա, հայկական առասպելաբանական միտքը ստեղծեց «գրույցներ», որոնք արդեն այլ ձևով էին շեշտելու նախարարական տների ոգեղեն և ծագումնային կապն աստծո, կամ, ավելի ճիշտ, *Սուրբ ընտանիքի* հետ:

Մովսես Խորենացին տեսնում էր այս առանձնահատկությունը, որ կարմիր թելի նման անցնում է իր շարադրանքով՝ Հայկից մինչև Գրիգոր Լուսավորիչ: Եվ պատահական չէ այն, որ նա իր սիրելի Բագրատունիների և Ամատունիների մասին խոսելիս մանրամասն պատմում է նրանց հրեական ծագման մասին «գրույցները»՝ նրանց մոտեցնելով *Սուրբ ընտանիքին*:

Առավել հետաքրքիր է իր մեջբերած մեկ այլ դրվագ. «Այստեղ ես հիշում եմ սքանչելի ծերի գրույցը, որ ասում էր. «նախնիքներից ունեմ այս գրույցը, որոց հիշատակությունը անցել է հորից որդուն, ինչպես Ուլիմպիոսի գրույցները Տարոնի և Սիմ լեռան մասին»: Արդ՝ երբ Անակ ապրում էր Արտազի դաշտում, նրա գիշերելու տեղը խորանի ներսի դին, պատահեց սուրբ առաքյալի գերեզմանի մոտ անկողինը, և ասում եմ, այստեղ է հղություն առել մեր սուրբ և մեծ Լուսավորիչը: Ուստի և նույն առաքյալի շնորհը ստացավ նա, որ նրա հանգստարանի մոտ գոյություն առավ և նրա հոգևոր մշակության պակասը լրացրեց» (Բ. հղ): Այստեղ Խոսքը Սուրբ Թադևոս առաքյալի և իր գերեզմանի մասին է. գերեզման, որը գտնվում է Սուրբ Թադեի վանքում, Արտազում: Ենթադրվում է, որ «ծերը» Սուրբ Սահակ կաթողիկոսն է:

Սիմեոն Երևանցին կաթողիկոս հնարավոր է՝ ունեցել է այլ սկզբնաղբույր, քանի որ չի հիշատակել Պատմահորը: Կաթողիկոսը խոսելով Սուրբ Թադևոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների մասին հետևյալ ձևով է պատմում այդ ավանդությունը. «Եվ քանի որ սրանք չկարողացան իրենց ողջ վիճակը ամբողջովին դարձի բերել Քրիստոսի հավատին, դրա համար էլ նահատակության ժամին խնդրեցին Քրիստոսին, որպեսզի իրենց սերնդից հանդես բերի մեկին՝ իրենց վիճակի պակասը լրացնելու: Եվ որոնց աղոթքներով Քրիստոս վեր հանեց Սուրբ Թադևոս առաքյալի շնորհաբուխ գերեզմանից Սուրբ Գրիգոր Լուսավորչին, որ

վերստին նորոգեց եւ փայլեցրեց նրանց կողմից սերմանվածը» («Ջամբո», գլուխ Ժ): Այնուհետև, նույն գլխում, ասում է. «Իսկ հետո, երբ Աստծո նախախնամությամբ Սուրբ Թադեոս առաքյալի կենդանի նշխարներից, ըստ իր հայցման, բողբոջեց օրհնության ճյուղը՝ Սուրբ Գրիգորը, որը եւ տարբեր տանջանքներ կրելով հավատքի բերեց եւ մկրտեց Տրդատ թագավորին եւ լուսավորեց Հայոց եւ Վրաց աշխարհը եւ մյուս տեղերը»: Հիշենք, որ հայկական պատմագրությունը Սուրբ Թադեոս Առաքյալին ընկալում էր որպես եղբայրը Հիսուսի («Ջամբո», Բ, Ժ):

Մեջբերված փոքրիկ դրվագների արագ քննությունն իսկ վկայում է այն մասին, որ հինավուրց «գրույցն» իր ամբողջության մեջ կազմված է առասպելին բնորոշ բաղադրիչներից՝ բուն թեմա, վերապրուկ (ռուդիմենտ)՝ եկող ֆետիշիզմից ու տոտեմիզմից. ֆերմենտ, որը ցույց է տալիս գրույցի հետագա զարգացման ուղին (Հայաստանի հոգևոր զարթոնքը), տարբեր համակցություններ:

Այսպիսով, «գրույցն» ունեցել է առասպելի արժեք: Այսինքն, հասարակությունն այն ընկալել է որպես իրողություն, բայց ոչ Պատմահայրը և Սուրբ Սահակ Պարթևը, այն դեպքում, երբ Սիմեոն Երևանցին այն դիտարկում է որպես իրողություն, որով և պայմանավորված է տեսնում մեր կաթողիկոսական աթոռի պատրիարքական բարձրությունը: Բնականաբար սա էր առաջնայինը. սակայն «գրույցն» ուներ և այլ իմաստ, որն ակնառու է, բայց շեշտված չէ ո՛չ Պատմահոր, ո՛չ Հովհաննես Դրասխանակերտցու, և ո՛չ էլ Սիմեոն կաթողիկոսի կողմից, քանի որ այս «գրույցով» Սուրբ Գրիգոր Լուսավորչի մոտիկ և հեռու ժառանգները (հետագայի Մամիկոնյանները, Կամսարականները, Գուգարքի բղեշխները և նրանց խնամհացած այլ գերդաստաններ) սերտորեն կապվում են *Սուրբ ընկրանիքի* հետ:

## ՇԵՍԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Քրիստոնեության մեջ ընդհանրապես և ի մասնավորի հայոց քրիստոնեական պատկերացումների համակարգում հնուց անտի առանձնակի դեր է վերապահվել սուրբ գործի համար մարտիրոսացած անձանց: «*Մարտիրոս*» եզրը ծագում է հունարեն *μάρτυς* ((ատիններեն՝ *mártys*) բառարմատից և նշանակում է «ակնատես, վկա»՝ մարդ, որն իր կյանքը գոհել է հավատքի կամ գաղափարի համար: Հայերեն ձեռագրերում, կրոնադավանաբանական երկերի մեջ և առօրյա խոսակցականում «*մարտիրոսին*» համարժեք է «*նահապակը*»: Եզր, որն այսօր ևս ընկալվում է որպես հավատքի համար մարդկային կյանքի ինքնական նվիրաբերում, անձնագոհություն: Իրականում «*նահապակն*» այլ նախնական իմաստ, դեր ու նշանակություն է ունեցել, ինչը կարծես թե վերականգնվում է տարածաշրջանի բրոնզ-երկաթեդարյան թաղման ծեսի որոշ մանրամասների համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում:

Հայաստանի մ.թ.ա. II-I հազ. դամբարանային համալիրներում (Լճաշեն, Քարաշամբ, Նորատուս, Արծվաքար, Մոթթի ձոր, Հացառատ, Քանազեղ, Ներքին Գետաշեն, Գեղիովիտ, Օշական, Կուրթան և այլն) առանձին խումբ են կազմում միանգամյա (մեկ ակտով արված) խմբային թաղումները: Այդ դամբարաններից յուրաքանչյուրի խցի հատակին, նախապես առանձնացված տեղում, կծկված վիճակում աջ կողքին պառկած (որոշ դեպքերում նաև նստած) դիրքով ամփոփվել է տարեց (40 և ավելի տարեկան) տղամարդու անատոմիապես անխաթար մարմին, իսկ կառույցի մյուս